

ՊԱՅԱՆՁՈՒՄԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Առ Տիար Ե. Տիկերճեան

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Հրէշ Անտոնի եւ իր արքանակներուն վաճէի զառանցանքին լուս ու մուսնջ մտիկ ընելն անբնական կը գըտնէք եւ Ձեր խօսքերուն մէջ ծագրական շեշտեր խառնելով «Երկիւղածութեամբ» պիտի ըսէք (հեղինակը) կըսէք : Աշխարհիս վրայ գոյութիւն ունեցող ամենաստակալի գազան մարդն իսկ , վայրենիքն սկսեալ , վայրկեաններ ունի՝ երբ պահ մը իր ներսերդին կզգայ խղճի մը շարժումը : Կոյութիւնը , սակայն ինչ օգուտ որ արմատագած հակամարդկային վատ զգացումներ զայն անմիջապէս կը խղզին , նոյն պարագային վերագրեցէք նաեւ անոնց պիտի ու մուսնջ մտիկ օտար աւելցնելով նաեւ այն երկիւղը զոր զգացին անսպասելի ձայնէ մը : Կասկածելով որ թագուն վտանգ մը կըսպանար : Գուցէ վաճէն (բաւական խելահաս) թողչած մի ոմն օգնութեան կը կանչէր : Գազանները այդ հասկնալու չէին՝ քանի որ Անտոնը հայ մըն էր եւ հայերէն գիտէր : Իսկ եսզմայն «նաբընջողոյն» յիշուելը ինչու՞ գործողութեան մը արագութեան օտարութեան նը խաթարէ եւ գործն սպաննէ : անոնք անպատճառ նարնջագոյն եագում մ'ըլլալու խնդիրով չզբաղեցան երբէք , որ Ձեզի ալ այդպէս ըսելու իրաւունք աըբուէր . գա ընդհանրապէս թուրքերու գործածած եագումային յատկանիշ գոյնն է՝ որ անցողակի յիշուած է :

Շատերէն աւելի պիտի ըսեմ որ , գուր ատիժը չէք ունեցած թուրքերն հոգեբանութիւնը ուսումնասիրելու . որովհետեւ Ձեզի ներկայացուած թիւերուն ներքինին չէք թափանցած զէթ անոնց խօսքերու շեշտերէն զատելով եւ այդ պատճառաւ անտեղի հարցումներ ու ծագրական ակնարկութիւններ ընելու մղուած էք : Թուրք կասկածարական պաշտօնականներ մեծէն մինչեւ փոքր կարող էին եւ են սոսկալ (կեղծ սոսկումով սակայն) հայերէ , զի անոնք ամենքն ալ այն հայահալած քաղաքականութեամբ սողորուած ճշմարտութեան գոյն ալ կուզին ամբաստանութեան մը որ հայուն կը պատկանի : Ձէք իմացած որ չառաքան ստաբուսը որ մը նոյն իսկ իր ստաբին հաւատացած է : Այո՛ , թուրք պաշտօնեան ըլլա՛յ ան փաշա կամ միւրիւրեք կամ միւրտիւր , իր քսակը պարարտացնելու միջոցներ կը փնտթէ : Միթէ՞ ամբողջ թուրք կասկածարական քաղաքականութիւնը լրջութեան քոզին տակ ծածկուած եւ հասկնալի կեղծիքի շղիկն գործելակերպը չէ : Կը հաւատա՞ք որ անոնք յրօտիկն ստակացին կիլիկեան թագաւորութեան մը համար իրր թէ

զիմած են իրենց տրուած ծրագիրը յաջողեցնելու համար :

Վեհափառ կաթողիկոսը այս մեղադրանքին տակ կը մնայ , ցորչափ արդարութիւնը սեղոր թերելու փոյթը չուենեար : Մենք անոնցմէ չենք որ յարգանքի պակասութիւն գործել կուզեն իրենց Վեհափառին զէմ , եւ միեւնոյն ատեն՝ անոնցմէ ալ չենք՝ որ սարդարութիւնը իր ազդերէն խնդրելու մէջ կ'ընկերկին ու կը քաշուին : Վեհափառն ալ վերջապէս մեզ նման հոգեզէն է եւ կ'իրքերու ենթակայ :

նայրու կողմէ պատրաստուած յեզուփոխութեան որուն օրինակը զիս թարմ է : Այո՛ . պէտք էր իւրաքանչիւր պաշտօնեայ լուրջ սոսկում մը կեղծէր եւ անմիջապէս հեռագրէր իրմէ բարձրին՝ մինչեւ կեղծողական կասկածարութիւն՝ սո ի յուելումն ամսականն ու շքանքշանաց եւ ի հեծուկս տասնպետը հայերու : Շարքի պէլի խօսքերէն (երես 81) զոր խօսեցաւ Ձէքի . իր հերոսական , յողթապան արշաւանքն յետոյ , չի կրցի՞ք զուշակել կամ հասկնալ միւրներուն ալ յուրջ ստակալի կեղծիքը . . . Այ այպաքէն այդպիսի նպատակաւոր յուրջ ստակալներու ճեղկագրութեանց իրք հեճեւանք հայրական վեց վիշապները արիւն լացին . . .

Ինչ հարկ կար լուս թեմ մը անցնելու հոն (երես 87) երբ հրէշութեանց զլուս գործոց մը ներկայացնելու ատեն զգուշացած եմ լրիւր թուրք գործածելէ : Արդեօք լուս թեմը կէտ կ'իտատօր անցնելու էի , բայց այն ալ եղած է այդ բաներուն տեղ :

Գուր Ձեր քննադատականին մէջ հրապարակ կուգաք իբր քունդ շղիկն հայ ազգայնական մը . չհաւատալով թէ ամենազէշ հայ միակ կրնայ ըրած . Ըլլա՛կ կամ ընել այնպիսի՛ վատութիւններ . . . րուն վերագրած եմ : Երեւի թէ՛ քունդ (իմա՛ թուրք) ազգայնական ազգասիրութիւններ (ուրեմի ի՛չու՛՛ ամբաստանեցինք թուրքերը՝ երբ անոնք ալ իրենց ինքներուն հանդէպ Ձեզ նման կը խորհին ու բրածուն չին հաւատարմ) թոյլ չտուաւ հաւատալու որ այդպիսի գէշ հայեր ալ կը գանուին եղբ (երես 87) սակայն կազ չեմ ջիղերնիդ (ազգայնական անշուշտ) օտք չելին , բարեկամ , երբ ցաւով խոտովանիմ ու Ձեզ ալ վտանգեցնեմ որ անոնց վատ գործերը գերազանցող եւ հրէշային տարրերը զլուս անցնող հայեր կը գրաստին ամենուրեք : յայտնի կամ թագուն , այո՛ շատ կան՝ բայց մի բարկանաք՝ այլ սրտովին ցաւ կ'զէք . անոնք հայութեան վիժած վասակներն են . . . Հայրենիքէն արտասահման վերագրածէս ճիշդ երկու օր տա՛ջ՝ տնտեսի գաղտնութեանց եւ ազգապատուածախ ստորին արարքներու մարմնացում եղող վիժած երկուստարի մը՝ («Կոնկորա-Երկօ» աղաւաղեալ անուամբ) գիշերը փողոցին մէջ վրիժառու ձեռքերէ շահաստակ եւ դաշտին անհամար հարուստներով այլակերպ եղած լէշին սկսածատեսն եղայ , նոյն ատուտն իսկ , Հայ մը՝ որուն գործած աւերները խեղճ ու անօգնական կոյսերու եւ հարսերու եւ զիղեցիկ վաւակներու նկատմամբ՝ (ի հ՛ճուան կըրքամով թուրքերու) երբ պատմուելու Ըլլան սիրտ չղիմանար , մարդ կը ստակայ . . . Բայց զուր այսպիսի հայարարքներու հաւատալու համար , թուրք եւ ազգայնական թողնալ մը կը ներկայանաք Ձեր քննադատականին մէջ որ անշուշտ գողելի չէ :

Հայաստանցի արհեսաւորը երբ զիւրութիւն ու միջոց ունենայ իր ամբողջ հմտութեանը ի կիր արկանել , կարող է Եւրոպացիէն աւելի մեծ եւ ապշեցուցիչ զիւտեր ընել . եւ չինել այնպիսի մեքենայ մը՝ որ քառորդ ժամէն բանտին պտտը մէկ մարդաչափ լայնութեամբ ծակէ , դա անոր համար շատ աննշան գործ է նկատի ունենալով որ Հայաստանի մէջ շատ տեղեր բանտապատերը ընդհանրապէս հիւսուած են պարզ հողէ աղիւսներով ոչ թէ հաստատուն քարերով , ինչպէս էր . . . քաղաքինը եւ զուր ալ այդ հասկցած

ըլլալու էիք գործողութեան արայ ընթացքէն : Դեռ շատ աւելի ապշեցուցիչ գործեր կրնայ արագորիչ հայ արհեսաւորը , սակայն աւա՞ղ որ անոր յաւաքգրիմելու բաղձաբեր քննակալութեան արհեստ թաթով կը պատնջուէր : Իսկ հիմայ ալ կրկին քաղաքական ու տնտեսական վտան ու տագնապը ոչ միայն արհեսաւորներուն այլ ընդհանուրին ալ յառաջդիմելու համար աչք բանալու չեն թողուր :

Քաղաքական յանցաւորներն ալ ընդհանրապէս անջատ անջատ կը բանտարկուէին , երբեմն ալ նոյն քաղաք . յանցանքով նոյն դատապարտուներն ալ միեւնոյն խօլուշին մէջ , հեռի պահելով օտար բանտարկեալներէ , աննց փեւս գաղափարներէն յիւստուելու եւ օր մը կասկածաբար զիւր իր մի կոյստուիսս չցողուելու համար :

Թուրք զինուորականը ոչ միայն այդ փախստականները կըրնար ձերբակալել իր յանդուգն արիւթեամբ , այլ նա կարող է մուկն իսկ իր խոտաչէն դուրս բերել ալ եթէ անոր բերանը կրծելու ոսկորները գրուած չըլլան . . . Անտես չատենք նաեւ հայ շինականին վտանգաւոր սօսնջակատութեան անուրանալի դիւրութիւնները իր ցեղակից անձնուէրներուն ու տասնպետներուն համար :

Բնադատականը վերջացնելէ առաջ տեսակ մը ծաղրա-գնահատական սողորնիդ ալ զարմանք չպատճառեց , Ձեր վերի նողբէն դատելով . . . Իբր յաջող նողբիչ մը (ինչպէս ներկայացուցած էր Արշալոյսայի յարգոյ խմբազրութիւնը) աւելի գեղեցիկ պարբերական մը , իբր տիպար չէի՞ք կըրցած դատել , այդպէսով Ձեր գեղեցիկ վրձինին գեղեցիկ ճաշակն ալ զէթ ցոյց տալու իրապէս : Միայն չքրտացող լոյսը աչքերնուդ զարկաւ , չկային՝ ուսելի գեղեցիկներ :

Բայց շատ երկարեցաւ չէ՛ . գրքին այլ եւ այլ կէտերը Ձեզի հասկնելու համար այս ալ քիչ է սակայն : Միայն իբր վերջաբան ըսեմ որ (անշուշտ կը ներքէք) յետ այսու , երբ մի ու եւ գիրք կամ յօդուած քննադատուելու դիտումն ունենաք , գրիչը ձեռք առնելէ առաջ աղէկ ուսումնասիրեցէք զայն ու մի նստիք չքրտացող սրտ յոյսի .՝ մը տակ , շոգիապատ ակնոցն աշխուհոյ (անշուշտ կը հասկնաք) ամեն պայծառ ինչ տարտամ ու աղօտ շտեմնելու համար : Այլ ընտրեցէք բնական լոյսեր , պայծառ արեգակ մը ու երկու լուսին աչքեր . ահա այն ատեն միայն պիտի տեսնէք պարզ ու որոշ .

Վ . Գ . ԲՐՈՒՏԵԱՆ

Աղիւսանքիս ՆՈՐԵՐ ՆԻՒԹԵՐ ԱՋ ՈՒ ՁԱԽ

Միայն զիպի նոր սխալ գանալիմուս . .

Կ. Պօլսոյ վարչութեան Ազգ Երեսի. Ժողովը իր անտրամաբանական արարքներուն վրայ հատ մը եւս աւելցնելու համար , Երուսաղեմի խնդրը վերջնապէս կարգադրուած ըլլալը սուրախութեամբ արձանագրեց իր տոմարներուն մէջ :

Երուսաղեմապոլսոյ մեր երեսիփոխանը՝ Շահրիկեան , ինք ալ արուած վճռին իրաւամբ համաձայն չի գտնուիր . Պարզու Փափազեանին իբրեւ պատուիրակ 50 օսկի ամսական յատկացուելուն համար նախաձեռն շարժելն , թէ՛ Երեսիփոխաններուն բռնած կողմակցա-

կան եւ սպորէն ընթացքը յայտնի տեսնելով :

«Աղատամբար» վերջին թիւերով՝ ձգելով Ղեւոնդ վարդապետ Մաքսուտեանի օժիթը , կը չեչտէ միտոյն Երուսաղէմի մէջ տեղի ունեցած զեղծումներու եւ բարեկարգութեան պէտքին վրայ : Հա՛ Շեռոյի . . . Եօյա՛ կեղ Շահրիկ Աղա :

Միտոյն մէկ բան միշտ մտնալ կուզէ Պ . Շահրիկեան-Աստմ այն է՝ Երուսաղէմի մէջ ի բացակայութեան Ղ . վրդ . Մաքսուտեանի , 1906էն 1908/9 վերջերը՝ 10000 աւելի ոսկիներու մտնում տեղի ունեցած էր Պօլսոյ պատասանող ու թը վերաբարներու ձեռամբ որը Ղեւոնդ վրդ . իր տեղեկագրին մէջ մասնացոյց ըրած էր : Ինչու՞ առոնց մասին ո՛ր եւ է քննութիւն չի կատարուեցաւ եւ կատարուելը չի պահանջուեցաւ : Ինչու՞ երեք կոյսեր բռնաբարող վերաբարներու համար եւ ոչ իսկ խօսք մը չըսուեցաւ , մասնաւանդ որ առոնք Պօլսոյ ալ կը գանուէին : Ձէնէ մի՛ այդ բռնաբարումներու յանցանք չի նկատուելը զիպարմկային հարցերու կտորը անցած է . . . Ալ այն ատեն եկաի Գուլէի բռնաբարիչ եւ կուսապիղծ թուրք ստիկանները մեղադրելու ինչ հարկ կը մնայ . . . քանի որ ստիկայ զիպարմկայ արդարանալի է . . .

Երուսաղ Օսեանիս ունեցներ . .

Գրականութեան ՀՏՊԻՏներէն Երուսաղ Օտեան , որ բնա ո՛ր եւ է առիթ փոխուցում չէր Տ. Նղիշէ Թորոսեանին զէմ հայելու , զիս նոր կը լսենք թէ՛ այդ խալիկ Ազգ . Երեսիփոխանը .՝ . . . այս անգամ ալ Պօլսոյ Ազգայնեք թիրթիրներով իր ունեցներն ու հաչոցները զրկած է Եզիպատս , որպէսզի իրեն նման վարնոց ծաղրածու հապիտներ նոյնը կրկին Եզիպատսի հողին վրայ Տօլակսրճիկերու շարժքը եզոյ «Հայրենիք» որ անտարբոյս «Հ . Բ . Ը . Միութեան» ճանչցուած . . . «Կարեւոր» թիրթիրէն մէկն ալ է , երեւի չէ՛ կըրցած ցաւը մտնալ իր պոչին , որուն վրայ իրաւամբ կ'օրտէս էր Տ . Նղիշէ Թորոսեան , եւ այդպիսի պարագաներու մէջ սովորական եղող միջոցները գործըրած էր . այսինքն- ունալ , հայել եւ խածնել :

Մենք՝ Երուսաղ Օտեանին զեղգիկ ու հայիս , ինքզինքը ու իր գրականութիւնը անգամ ծաղրող Տօլակսրճի մը ըլլալը գիտէինք , իր գրածները միմիայն խնդրուելու համար կարողացողները կը գտնուին , բայց երկու բան կը պակասէր մեզի գիտնալ , Մին՝ թէ ինչպէս «Հայրենիք» մինչեւ այդ աստիճան ապուշութեանը կ'օրտէս կրնայ թաղուել , ու յետոյ թէ՛ ինչպէս Երուսաղ Օտեանի պէս զեղգիկ հերթիկն մէկը կըրնայ երեսիփոխան ընտրուել ազգային գործեր վարելու համար : Օտեանա՞ք՝ որ անգամ մը՝ «Արեւ» անուն «Լուսաբեր» կցուած թիրթիր մը մէջ , Իզմիրեան Վեհափառին վերագրուած մեղադրանք մը հերքելու համար , հայերու դուստնած սրբութիւնները կ'ոտնահարէր , Ս . Հաղորդութիւնը փեքիկ հեղիալի , իսկ Սրբոց Մատուցները մը կան չորի նմանցնելով :

Առակ մը միաքա կուգայ այս պահուս . . . Ժամանակաւ թուրք մեռել մը կանցնեն եղի այն ճամբայն , ուրկէ թագաւորի մը սատրապամը՝ Պէխրի Մուսթաֆա անունով՝ սովորութիւն ըրած է եղեր անցնելու , Պէխրի ստորազամը՝ մեռելաբարձ ամբոխին կը հրամայէ որ վար զինն

ՊՐԷՏՅՈՐՏ ՀԱՌԻՉ

THE BRADFORD HOUSE

ՊԱՆԳ ԱՆԿՈ - ԷԺԻԲՍԻԷՆԻ ԴԻՄԱՅ , ԱՆԳՆԻԱԿԱՆ ԶՕՐԱՆՈՑԻՆ ՓՈՂՈՑԸ

Ձափաւոր զնով եւ ձեւաւոր հագուելու համար պէտք է զիմել վերոյիշեալ ՊՐԷՏՅՈՐՏ ՀԱՌԻՉ ստուելէններու հոյակաւոր վաճառատունը , ուր չափի վրայ եւ անգլիական ամենաընտիր կերպով գօտրիւններ կը պատրաստուին վերջին նորաձեւութեանց համաձայն , կանխիկ վճարումով

250, 300, 350, ԳԱՆԿ, ՈՂՁԻ

Սոյն վաճառատան վարիչը հայ մը ըլլալով հայ յաճախորդներուն աւելի զիւրութիւն կընծայուի .

ԴԻՄԵՆԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԵՏԻ ՄՆԱԲ

մեռելը, ու ինք կողմնակից իջնելով մեռելին կը ծռի եւ սկանչէն վար բան մը կ'ըսէ, ու վերստին կ'առը նստելով կը շարունակէ ճամբան :

Թէ Պէլսրիին բարեկամները եւ թէ մեռելատարները Սատրապներին այս Ըրածին վրայ կը զարմանան եւ միտքերնին կը դնեն հարցնելու թէ՛ ինչ ըսաւ մեռելին սկանչէն վտր :

Շատ չ'անցնելու, առիթ մը կը ներկայանայ որ Պէլսրի Մուսթաֆային կարելի կըլլայ հարցնել, որուն կը պատահանէ թէ՛

«Ըսի՛ մեռելին որ՛ կ'ըսէ, անդիւր աշխարհը երբ հասնի եւ իրմէ տեղեկութիւններ ուղեն այս քաղաքին մասին, առանց նեղութիւն կրելու երկու բառով ըսէ թէ՛ «Պէլսրի Մուսթաֆան Սատրապանութեան բարձրացած է, ալ հասկըցէք աշխարհին ինչ... ԸՆԿԱԸ»

Մեր երեսփոխաններուն կոչումը եւ «Հայրենիք» օրաթերթին սկզբունքները թեան ինչ աստիճանի վերայ գտնուելը՝ Սրտանդ Օսմանէն կարելի է չափել, որ մէկուն ատենագրութիւն է, իսկ մէկաւորն աշխատակիցը :

Սեւ վոնմակը եկաւ, սեւ վոնմակը գնաց

Մարդիկուծեան ասպետները (Իմա՛ Լուսաբեր-Արեւի քիթը) այս ատրի իր հոգեվարքին մէջ աղօթք խաղ մը խաղաց, եւ մինչեւ հիմայ տակաւին կը խնդայ իր մեծ յաջողութեանը վերայ...

«Փոսթիւան օճակ» այդ թերթը, որ տարուէ տարի ունեցած կարեւոր քաղաքիկ աւելի ճշգրտած էր այս տարի, խորհրդեան հոմանիշ խելացիութիւն մը բանեցուց որ կարծես չը պիտի կրնայ մարտի...

Սգիպտահայ հարուստները վախցնելու եւ պիւտքէն հաւատարակչուելու համար դրամ շորթերու նպատակաւ - եւ պէտք է գիտնալ այս ատրիին անգամ մը չէր - իր կոտոր ներքին զաշինքին համաձայն, իրենց յորջորջումով սեւ վոնմակին պետքը Արզուեան չեղեպին Պոլսէն եւրոպայ ճորտայ հանեց... Երգիպտոս բերաւ, մորուքով է ըսաւ, կնկանը աչքը կապոյտ ակնոց կայ Ըսաւ, մեծ օթէլները իջած է ըսաւ, վերջապէս՝ ըսաւ ու ըսաւ... անչափ ըսաւ որ երգիպտահայ ոստիկանութիւնը այդչափ յայտնի նշաններով խօսուելէ յետոյ սեւ վոնմակին պետք ձեռք չ'կարծնալ անցնելու համար ինքզինքը եւ իր կազմակերպութեան անձնասիրութիւնը վերաբերուած զգաց... վերջապէս եզրակացուց թէ՛ սեւ վոնմակ ըսուածին մօրուստուր պետք՝ իր սեւ ակնոցով կնկանը հետ՝ Սգիպտոս բնաւ ոտք դրած ըլլալու չէ... այլ սովորական տեսակէն մանրաւոր է, «Լուսաբեր-Արեւ»ին մէջ յաճախ բուսած եւ ճիւղաւորուած տեսակէն :

Բայց խնդիրը այն է որ՛ սեւ վոնմակէն դեռ ոչ ոք Սգիպտոս չ'իկաւ, «Լուսաբեր»ին պատուածքները կարգի գրուեցան եւ... ալ գիւտը գտնուած է, երբ «Լուսաբեր Արեւ» բաց ունենայ՝ Արզուեան Պոլսէն Սգիպտոս ճամբայ պիտի ելլէ, պայմանաւ որ հոս չ'հանգրպի, որովհետեւ գաղտնի ոստիկանութիւնը չ'ափազանց սրտմտած է այս տարուան բանաձեւէն. սեւ վոնմակը եկաւ, սեւ վոնմակը գնաց... նայինք հարուստները ինչ պիտի մտածեն հիմայ :

հաւաքեց
ԱՐՇԱՆՈՅՍ

ՊՈԼՍՈՑ ՄԱՄՈՒԼԸ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՅՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՄՈՒԼԻՆ. - Թղթատարական, հեռագրական եւ հեռաձայնի վերահսկողութիւնը ելեւմտից նախարարութեան ներկայացուց հետեւեալ օրինագիծը որուն համաձայն օրաթերթերը բոլորովին ձրի, իսկ մինչեւ ամիսն անգամ մը հրատարակուող պարբերականները 2 փարայի թղթատարական ծախքով պիտի փոխադրուին : Ասիկա մեծ քայլ մըն է զոր կընէ սահմանադրական կառավարութիւնը յառաջիմութեան շաւղին մէջ, ինչ որ զգալի զարկ մը պիտի տայ մամուլին զարգացման եւ երկրի ամէն կողմերն ընթերցասիրութեան արածման : Իր այս բարեգէպ առաջարկին համար արդար եւ շնորհաւորելի է թղթատարական վերահսկողութիւնը որ, ինչպէս օրինագիծին կցուած իր պատճառարանեալ տեղեկագրին մէջ, եւրոպական մամուլին վախճած նման օրինակ առանձնաշնորհումները թուելէ յետոյ, ըսած է արդէն, այս կերպով տարեկան 3 000 ոսկիի չափ զոհողութիւն մը ըրած պիտի ըլլայ, բայց սահմանադրական թուրքոյ մէջ ուսման ու կրթութեան ընդհանրացումին ալ առաւելագոյն չափով մը պիտի նպաստէ : Ահաւասիկ կանոնագրին թարգմանութիւնը.

Յօդ. 1. - Լրագիրները բացառութիւն կը կազմեն թղթատարական ծախքէն, Այսինքն Օսմ. երկիրներու մէջ հրատարակուող լրագիրները, բաժանորդներուն հասցէին կամ անոնց խանութները զրկուելու պարագային բացառութիւն կը կազմեն թղթատարի ծախքէն :

Յօդ. 2. - Օսմ. երկիրներու մէջ առ նուազն ամիսն անգամ մը հրատարակուող պարբերականի մը համար, իթէ մինչեւ 50 կոտմ կշտէ, երկու փարա փոխադրութեան ծախք պիտի առնուի : Եթէ ծանրութիւնն աւելի ըլլայ, աւելիին իւրաքանչիւր 100 կրամին համար 2-ական փարա պիտի առնուի : Միւսնոյն ծախքը կ'առնուի թղթատարութեան անջատարար յանձնուած յաւելումներուն համար, Եթէ այդ յաւելումները լրագիրներուն հետ միասին յանձնուին՝ իւրաքանչիւրին վերոյիշեալ ծախքերը դատ գատ պիտի առնուի, բայց զրկողներու փափաքին համաձայն մասնաւոր հասցէ (ատրէսը մասնուէ) ունեցող իւրաքանչիւր ծրարին խառն (կայրը սաֆի) կշտին նախելով՝ իրը տպեալ թուղթ կը նկատուին լրագիրներն եւ ըստ այնմ ծախք կ'առնուի :

Յօդ. 3. - յող. 2ին մէջ յիշուած վարձքերը առնուելու տոնն՝ տոննձին թերթ մը չկազմող եւ իրենց վերաբերեալ թիւին իրը սմբողջացուցիչը ըլլալով հանդերձ անկէ բաժնուած թուղթերը լրագրի մը յաւելուածը պիտի նկատուին : Այս տեսակ թուղթերուն վրայ պարտին գրուած ըլլալ «Յաւելուած» բառն եւ իրենց վերաբերող թերթին անունը եւ թիւը :

Յօդ. 4. - Մասնաւոր հասցէ մը չկրող ո՛չ մէկ թերթի ծրար չի կրնար աւելի ըլլալ 5 քիլոգրամէ :

Յօդ. 5. - Այս կանոնագիրը... թուականէն սկսեալ պիտի գործադրուի (Պոլսոյ թերթերը)

ԵՂԻՇԷ ՓԱՄՊՈՒՔՅԵԱՆ

ՇՍԻԷ ԱՊՏ ԷՒ ԱԶԻԶ ԴՍՐԱԴՕԼԻՆ ԴԻՄՍՑ

Միակ ներկայացուցիչն է Ազգ. Հի.անդանոցի սիկարի թուղթերուն, կը լաճառէ մեծաքանակ եւ փոքրաքանակ : 1910 տարուայ պատի ե գրպանի օրայոյցներ գնելու համար միայն մեր վաճառատունը գիւմեալ է, եւ կամ դիւրութեան համար Վրչալոյսի Տպարանը :

Ա.Զ.Դ.Ա.ՅԻՆ Ե Ո Ր Ր Ր Ր

ԶԵՅԹՈՒՆԻ ԴԻՊԻԸ Հալէպէն 30 նոյեմբեր թուականու հեռագրուած է Պոլս :

Վստեալ ըլլալով որ Զէյթունի փախտականները մէկ քանի օրէ ի վեր դարձած են Զէյթուն, իրենց տուները, եւ ասոր անոր ինչքերուն վրայ կը յարձակին, եւ ոմանց կըսպանան, ու իրենց մէջ անուն մէկու մը տունն հաւաքուած արւելցութիւն կընեն, զինուոր, սասիկան-զինուոր, եւ ոստիկան զըրկուեցաւ իրենց գտնուած տեղը : Ասոնք այնտեղ հասածնուն պէս, փախտականները կրակ բային, եւ սպանուեցան ոստիկան-զինուոր Զէյթունի Սարգիս եւ հրատակներէն Տէլօ :

Վերի եւ վարի թաղերուն ժողովուրդը զինուելով սկսան հետապնդել հրատակները, զանոնք կառավարութեան յանձնելու համար, եւ ի դարձին խուզարկութիւն սկսաւ կատարել գտնելու համար ոստիկան-զինուոր Սարգիսի սպանիչ Միքէլ օղլու Յակոբը : Գրիստանայ ժողովուրդին ընծայած օժանդակութիւնը կառավարութեան, փառաւոր մէկ ապացոյցն է ամէն կողմ սահմանադրութեան ամրապնդման : Զայս կը տեղեկագրենք Մարաշի կառավարչին տուած լուրերուն վերայ կը գրէ Բիւզանդիոն :

ԵՄԱԿԵԱՅ ՓԻԼՈՆ

Երուսաղէմէն կը գրեն Երուսաղէմի Ամեն. Տէր Յարութիւն Ս. Պատրիարք՝ վանքի հաւատարիմ եւ անձնուէր սրտով ու հողով ծառայող գործօն վեց կարեւոր եւ անշահասէր վարդապետներու առ ի քաջալերութիւն նոյ. 28ին՝ ի տօնի սրբոց առաքելոց եւ առաջին լուսաւորչաց Թադէոսի եւ Բարթոլոմէոսի օրն ծաղկեաց յիշօն շնորհած է ու քաջալերած հետեւեալ վարդապետները :

Գէորգ Վրդ. Յովհաննէսեան (Տեսուչ Տպարանի) Գէորգ Վ. Ճանտուղեան (Աւագ Թարգման) Սարգիս Վ. Տէր Սարգիսեան (Տեսուչ Ելեւմտից) Գրիգոր Վ. Յովհաննէսեան (Տեսուչ Բէթղեմէի) Երեմիա Վ. Լիֆորեան (Հիւրընկալ) Կարապետ Վ. Տ. Գարիէլեան (Գասապետ) :

Հանրածանօթ եւ անխնամ Մատթէոս Վրդ. Գայրեգեանի դաւադիր ծրարներով նամակներն Պոլսոյ թերթերուն տարեգլխի իբրնուէր զրկուեցաւ նոյն իսկ իր ձեռագրերը, տեսնենք՝ ըստ Վեհ. Ս. Կաթողիկոսի Մատթէոս Վ. Գայրեգեան Ս. Աթոռոյ ոսկի սխնեւեմ մէկն է... սիւն մտքով եւ խորհրդով փտտած. ո՛հ արգահատելի սիւն :

ՅԱԶՊԱՌԻԹԻՒՆ

Ազգ. քանդակարտ ազգայիններէն Տիար Պերճ Օհանեան, որ Ազգ. քանդակարտ Խառն Գասաբանաց քաղաքական ատենին Բ. Գիւսանապետն էր, վերջերս ի վարձատրութիւն իր երկար տարիներու բարեւոք պաշտօնավարութեանը, աստիճանի կարեւոր բարձրացում մը ունենալով՝ Առաջին Գիւսանապետ (Greffier) անունն առած է նոյն դիւաններուն, Վերաքննիչ ատենաներու Ընդհանուր ժողովին միաձայն որոշումով :

Արշալոյսի Խմբագրութիւնը իր շերտերն շնորհաւորութիւնները զրկելով Տիար Պերճ Օհանեանի, նորանոր յաջողութիւններ ալ կը ցանկայ :

ՓՈՒՐ ԴԱՅԼ

Արշալոյս յառաջիկայ թուով մէկ սիւնակի յաւելումով պիտի հրատարակուի :


Մաւալի այս յաւելումը՝ աւելորդ է ըսել՝ յայտնուած փափաքներու համաձայն տեղի կունենայ :

ՎՐԻՊԱԿ

«Արշալոյս» 571-99 թուով հրատարակուած «ԵՒ ԴՈՒՔԻ ԴՍՐԱԴՕԼԻՆ ԵՒ Ա. ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ ԷՔ...» յողուածին մէջ, գրաշարական անուշադրութեամբ՝ մոտցուած էր յիշատակել չարկերտաւոր մամուլ... վարժ եւ իրազմամեղութիւնէ ազգին հայոց, աստուածորան» Շուրվէթցի Սարգիս Գասաբանի անունը, որ վերոյիշեալ հրատարակութեան բուն շարժառիթը եղած է :

Այս ակամայ սխալը պատճառ պիտի ըլլայ անդրադառնալու Պ. Լեւոն Մելիք-Աղամեանցէ նոր ստացուած ուրիշ հրատարակութեան մը վրայ, որ կը նախորդէ վերոյիշեալ թուով ակնարկուած զրբոյցը եւ նախարանն է անոր :

Հայկական վիճակահանութեան ազդարարութիւնը եւ շահող թիւերը տեսնել չորրորդ երեսին մէջ :



ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՊԵԱՆ

ՇՍՐԱ ՄՕԶԱՄԻՏ ԱՒԻ, ՏԱՐՊ - ԷԼ - ԷՆԱՊԱ ԹԻԻ 1
ԿԷՄԷ ԷԼ ԿՈՒՂՐԱՄ ՄԶԻԹԻՆ ՃԻՇՏ ԴԻՄՍՑ

Երկար տարիներ կարեւոր տուներու մէջ աշխատելով փորձառութիւն ստանալէ յետոյ, այժմ իր սեփական վաճառատունը ունի, ուր կը վաճառուին թէ՛ նոր եւ թէ՛ գործածուած կարի մեքենաներ ամեն տեսակէ, միշտ առաջնակարգ Ֆապրիկաներու ապրանքները ընտրելով կը գնէ կամ նորերու հետ կը փոխանակէ կարի հին մեքենաները : Իրմէ գնուած նոր մեքենաները հինգ տարի ձրի կը նորոգէ : Նորոգութեան համար երբ պէտք ըլլայ՝ յաճախորդաց տունը կայցելէ եւ իր կատարած նորոգութիւնները տարիներու համար կ'երաշխաւորէ : Կը վաճառէ նաեւ ամեն տեսակ կազի վառարաններ եւ ատոնց նորոգութիւնները կ'ընէ անմրցելի յաջողութեամբ եւ դիւրաբար : Իրեն դիմող բոլոր յաճախորդներն ալ գոհ պիտի մնան :

